Դեսպան Յամադան այցելել է 1988թ.-ի երկրաշարժի զոհերի հիշատակի ոգեկոչման արարողությանը

Դեկտեմբերի 7-ին դեսպան Յամադան այցելել է 1988թ.-ի երկրաշարժի էպիկենտրոն Սպիտակ՝ մասնակցելու երկրաշարժի զոհերի հիշատակի ոգեկոչման արարողությանը: Արարողությանը ներկա են եղել նաև վարչապետ պարոն Փաշինյանը, արտակարգ իրավիճակների նախարար պարոն Փիլոյանը, արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնատար անձինք, այդ թվում՝ նախարարի տեղակալ պարոն Բալյանը, և այլք: Նրանք ծաղիկներ են խոնարհել Սպիտակի երկրաշարժի, ինչպես նաև Արևելյան Ճապոնիայի երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված խաչքարերին՝ աղոթելով երկու երկրաշարժերի զոհերի համար: Դեսպան Յամադան և նախարար Փիլոյանը մտքեր են փոխանակել նաև նախարարության առաքելությունների, ինչպես նաև Ճապոնիայի և Հայաստանի համագործակցության վերաբերյալ:

1988թ.-ի երկրաշարժի հուշահամալիր

Վարչապետ պրն. Փաշինկանը ծաղկեպսակ է դնում

Մասնակիցները

Արևելյան Ճապոնիայի երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված խաչքար

Դեսպան Յամադան և նախարար պրն. Փիլոյանը ծաղիկներ են խոնարհում Արևելյան Ճապոնիայի երկրաշարժի հուշահամալիրին

Դեսպան Յամադան, նախարար պրն. Փիլոյանը նախարարի տեղակալ պրն. Բալյանը և արտակարգ իրավիճակների նախարարության այլ պաշտոնատար անձինք
(Դիմակներ չեն կրվել միայն նկարվելիս)